


ԲԱՐԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ



Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՆ

ՈՒ

ՆՐԱՆՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ

ԾՐԱԳԻՐԸ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ԷԼԵՔՏՐԱՆՈՐԻ ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

1908

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԳՈՒՄԱՐՈՒԱԾ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ԵՒ ԱԾԽԱՐՀԱԿԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ՅԱՐԳԵԼԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԻՆ

ՆՈՒՔՐ

ՅԱՌԱՋԱՐԱՆԻ ՓՈՒՍԱՐԷՆ.

Յառաջաբանի փոխարէն այստեղ առաջ ենք քերում այն՝ ինչ որ խօսել ենք Թիֆլիսում 1907 թ., Հոկտեմբերի 6-ին Ս. Էջմիածնի կալուածների բարեկարգութեան համար զուգարուած ժողովի քացման ժամանակ:

«Ժողովը քացուած համարելով նախ իմ խորին շնորհակալութիւնս եմ՝ յայտնում յարգելի ժողովականներիդ՝ որ յանձն էք առել զուգարուել այստեղ խորհրդակցելու թէ ի՞նչ միջոցներով հնարաւոր է կանոնաւորել Ս. Էջմիածնի կալուածների շահագործման խնդիրը: Թէ Էջմիածնում եւ թէ ժողովրդի զանազան շրջաններում այս խնդիրը վաղուց է ծագել, բայց դժբախտաբար մինչեւ այժմ՝ իւր ցանկալի լուծումս չէ ստացել եւ տակաւին մնում է առկախ Ս. Էջմիածինը սկզբից մինչեւ այժմ՝ եղել է մի կենդրոն, որ յարատեւել եւ գործել է ոչ թէ իւր ներսն ապրող անհատների համար, այլ այն ժողովրդի, որի հետ ապրել է եւ որի ուրախութեան ու տխրութեան միշտ մասնակից է եղել: Մի կողմը թողնենք, թէ որչափով է օգտակար եղել, որքան թերի է կատարել իւր պարտականութիւնները դէպի հայ ժողովուրդը՝ այդ խնդրի լուծումը մեզ հետոն կը տանէր, բայց փաստն այն է՝ որ Էջմիածինն իւր պատմական դերը կատարել է դէպի հայ ժողովուրդն եւ դեռ եւս ունի կատարելու կարելորդ

դեր, քանի որ արտաքին զանազան աննպաստ հան-
գամանքներ գոյութիւն ունեն մեր ժողովրդի ինքնուրոյն
Կեանքի զարգացման նկատմամբ:

Ներկայումս որքան որ առաջ գնայ մեր ժողովրդի
ինքնուրոյն գործունէութիւնը, որքան որ սալակենդո-
նացումս լինի մեր թեմերում՝ դպրոցների եւ կալուա-
ծական խնդիրների նկատմամբ, այնուամենայնիւ հար-
կւոր է մի վարչութիւն, մի կենդրոն, որն իր ձեռքն
առնի մեր բոլոր դպրոցական եւ կալուածական խըն-
դիրները, կարգ ու կանոնի տակ ձգի, հրահանգներ
տայ, ընդհանուր հոգացողութիւն անի, որպէսզի թէ
մեր դպրոցների կառավարութիւնն եւ թէ կալուածների
շահագործման խնդիրը կանոնաւոր ճանապարհով ընթա-
նայ, որպէսզի միատեսակութիւն պահպանուի բոլոր
վարչութիւնների գործառնութեանց մէջ, եւ ոչ թէ
անցեալ տարուայ պէս իւրաքանչիւր դպրոց, իւրաքան-
չիւր վարչութիւն իւր ցանկացած կանոններով առաջ-
նորդուի եւ պատճառ դառնայ խռովութիւնների՝ խան-
գարելով դպրոցի խաղաղ կեանքը, իսկ մեր կալուած-
ներն էլ սպիկար կառավարիչների ձեռքով ոչնչանան
եւ կորստեան մատնուեն տասնեակ հազարներ: Իսկ
այդ Կենդրոնական վարչութիւնը պէտք է լինի Էջմիա-
ծինը, որովհետեւ գոնէ առ այժմ՝ այլ կերպ էլ չէ կարող
լինել, քանի որ մեր բոլոր դպրոցների եւ վանական
կալուածների կառավարութեան նկատմամբ պետութիւնը
de jure ճանաչում է իրրեւ սեպհականատէր եւ իրաւա-
տէր միայն Էջմիածինը:

Ուրեմն եթէ այդպէս է՝ քարոյական պարտակա-
նութիւն կայ հայ ժողովրդի ձեռնհաս եւ քանիմաց
մասի վրայ, որ աջակէց լինի այդ հաստատութեան —
Էջմիածնին, որպէսզի վերջինս անթերի կերպով կա-

